ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«19» դեկտեմբերի 2025 թվականի N: 771 - Ա ք. Գյումրի

ԱՐԹՈՒՐ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածի, 167-րդ հոդվածի 3-րդ մասի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N:1392-Ն որոշման 2.2-րդ և 6-րդ կետերի, նույն որոշմամբ սահմանված N 5 հավելվածի 44-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N:1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետի դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2024 թվականի դեկտեմբերի 30-ի N:680-Ա որոշումը, հիմք ընդունելով Արթուր Ղազարյանի 2025 թվականի դեկտեմբերի 17-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու Գր. Լուսավորչի անվան N31 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արթուր Ղազարյանին տրամադրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2024 թվականի դեկտեմբերի 30-ի N:680-Ա որոշմամբ տեղափոխված 2024 թվականի ամենամյա երկարացված արձակուրդը՝ 25 աշխատանքային օր, և 25 աշխատանքային օր 2025 թվականի ամենամյա երկարացված արձակուրդը՝ 2025 թվականի դեկտեմբերի 29-ից մինչև 2026 թվականի մարտի 13-ը ներառյալ:

2. Արթուր Ղազարյանի արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու Գր. Լուսավորչի անվան N 31 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար

նշանակել նույն կազմակերպության սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ Քնարիկ Վազիգեղցյանին:

Դ.ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է